պահ և յԱստուածամնամ քաղաքդ Հաշտարխան, և ի Ղզլար, և 'ի բոլոր երկիրդ Գիլանու։

«Յորոց բազմաց վանօրէից մինէ՝ հրաշազարդ և գերահռչակ ուխտն սուրբ, որ յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկային շնորհօքն Քրիստոսի կառուցեալ կայ 'ի գեղջն Սաղիանու, որէ մերձ տիրախնամ քաղաքին Շամախու։ Որ յառաջագոյն էր ըստ ամի ճոխ և փարթամ, եկեղեցական և արտաքսական ընչիւք և կահիւք իսկ ի յանցեալ ժամանակն՝ (լուեալ էք թէ՝ որքան) խռովութիւնք և հինահարութիւնք եղեն 'ի յերկիրն Շամախու, ոչ սակաւ, յորմէ (թէ որքան) վշտացաւ և աւերեցաւ՝ երկիրն այն (ահա գիտէք ամենեքեան)։ Եւ յայրքան տաժանելի հարուածոց, սրբոյ ուխտին այնմիկ ևս մեծամեծ վնասք և հարուածք հասեալք են, յորմէ խսպառ աղքատացեալ և չքաւորացեալ է սուրբ ուխտն այն։ Իսկ զլսղճալի առաջնորդն սուրբ ուխտին Իսահակ ծերունազարդ վարդապետն, յետ բազմիցս չարչարելոյն և խոշտանկելոյն կարծրագոյն տանջանօք, ապա՝ զտուգանս յոլովս արկեալ են ի վերայ նորա։ Որոյ սակս՝ անկեալ է սուրբ վանքն այն 'ի ներքոյ բազում պարտուց։ Իսկ ապա՝ ոչ ունելով յուստէքէ ճար և օգնութիւն ինչ, վասնորոյ՝ դիմեալ ի սուրբ Աթոռս և առ մեզ, ծանոյց մեզ զցաւս և զաղետս իւր, և խընդրեաց ի մէնջ զօրհնութեան նամակս զայս, սակս օգնութեան և ազատութեան իւրոյ ի պարտուց անտի։ Վասնորոյ՝ և մեք շընորհեցաք նմա զայս օրհնութեան նամակս մեր 'ի վերայ վերոյ յատկացեալ օրհնեալ երկրացդ, զի կամ ինքն եկեսցէ առ ձեզ, և կամ զայլ որ առաքեսցէ փոխանակ։ ԹՄԺԷ թուին (1768.)։